

«100 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ»

Կլենտելի Հանրային Գրադարանի հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, Արարատ Տան Էսքիճեան Թանգարանի եւ NAASRի (Գալիֆորնիոյ Մասնաճիւղ), Մարտ 18ի երեկոյեան ժամը 7:30ին, տեղի ունեցաւ Բացիկներու Ցուցադրութիւն (հեռասփռուն) Orlando Carlo Calumenoի Բացիկներու Հաւաքածոյէն՝ 100 Տարի Առաջ Հայերը Թուրքիոյ Մէջ Բացիկներու Գիրքին Ցուցադրութեան մասին Կլենտելի Հանրային Գրադարանին մէջ: Այդ մասին տեղեկութիւններ փոխանցեց Խմբագիր եւ Սեփականատէր «Պիր Չամանլար» Հրատարկչատան՝ ՕՍՄԱՆ ՔԵՕՔԷՐ: Առաջնորդարանի կողմէ այս ձեռնարկին ներկայ գտնուեցաւ Արժ. Տ. Միքայէլ Քինյ. Կիւրեղեան: